

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2015թ. դեկտեմբերի 8-ի
նիստի /արձանագրություն N 5/

1. Հանձնարարել դեկաններին միջոցներ ձեռնարկել ուսման վարձավճարները մինչև տարեվերջ հավաքագրելու համար,
 - 1.1 հավանություն տալ ինստիտուտի 2016թ. բյուջեի եկամուտների և ծախսերի նախահաշվին:
2. Հանձնարարել ինստիտուտի միջազգային բաժնին՝ մինչև 2016թ. հունվարի 31-ը ուսումնասիրել Արևելյան գործընկերության և Էռազմուս ծրագրերը, ներկայացնել առաջարկ ինստիտուտի հնարավոր համագործակցության վերաբերյալ:
3. Հանձնարարել ուսխորհրդին առաջիկա օրերին զբաղվել ամանորյա հանդիսության նախապատրաստմամբ և ս.թ. դեկտեմբերի 21-ին կազմակերպել ուսանողների ձեռքով պատրաստված գեղարվեստական աշխատանքների ցուցադրություն:
4. Հանձնարարել Կինոյի և հեռուստատեսության ամբիոնին՝
 - 4.1 ուսանողներին տեխնիկա տրամադրելիս խստիվ առաջնորդվել «ԵԹԿՊԻ-ում կինոտեխնիկայի և սարքավորումների տրամադրման և օգտագործման կանոնակարգի»-ի պահանջներով,
 - 4.2 նախապես կազմել ավարտական աշխատանքների նկարահանման համար կինոտեխնիկայի տրամադրման ժամանակացույց, ճշտել «Պարադիզ»-ին պատկանող կինոտեխնիկայի առկայությունն ինստիտուտում:
5. հանձնարարել Հ. Ավագյանին կազմել նամակ ՀՀ ազգային արխիվի տնօրինությանը՝ մասնագետներ տրամադրելու և ինստիտուտի արխիվացման գործընթացը սկսելու խնդրանքով:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան